ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2025 թվականի №---Ա

«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգի 6-րդ կետի համաձայն՝ Որոշման №2 և №6 հավելվածներով սահմանված ձևերին համապատասխան հաշվետվությունները (այսուհետ՝ Հաշվետվություններ) Հանձնաժողով են ներկայացվում յուրաքանչյուր կիսամյակի համար՝ մինչև կիսամյակին հաջորդող ամսվա 30-ը,

բ) «ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2024 թվականի 2-րդ կիսամյակի Հաշվետվությունները Հանձնաժողով է ներկայացրել 2025 թվականի մայիսի 13-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո,

գ) Որոշմամբ սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովն Ընկերության նկատմամբ 2025 թվականի փետրվարի 26-ին հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 26-ի №ՄՄ/34.2-Մ2-7/851-2025 գրությամբ,

դ) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել,

ե) Որոշման №1 հավելվածի համապատասխանաբար՝ 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն, հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում ծառայություններ մատուցող կարգավորվող անձինք հաշվետվությունները Հանձնաժողով են ներկայացնում առձեռն, փոստով, էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային եղանակով, էլեկտրոնային եղանակով հաշվետվությունները ներկայացվում են փաստաթղթերի էլեկտրոնային շարժի

համակարգի (Mulberry), էլեկտրոնային փոստի կամ Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի (www.psrc.am) առցանց դիմումների և հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով: Էլեկտրոնային փոստով ներկայացման դեպքում՝ հաշվետվությունների ներկայացման օր է համարվում հաշվետվությունների և ուղեկցող գրության էլեկտրոնային առաքման օրը,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջն, այն է՝ Հաշվետվությունները (և ուղեկցող գրությունը) Հանձնաժողով է ներկայացրել 2025 թվականի մայիսի 13-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված պահանջների խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2025թ.